



ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ստեյն անդի համար ուր այս լրագրի մուտքը որդիբուծ չէ, ամբողջ 18րդ շրջանի (902 նոյ. — 903 օգոստ.) բաժնորդագրին է 20 Փր. կանխիկի կարելի է նաև բաժնորդագրուիլ քանի մասի համար որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2 Փր. հաշուելով և 1903 օգոստոս ամսէն անդին չանցնելու պայմանով:

Նամակ և ծրարագէտք է գրկելի հետեւեալ հասցեով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal Arménia. MARSEILLE (France).

ԺԸ ՏԱՐԻ ԹԻԻ 35

1904 ՄԱՐՏ 26 Եր. (Հ. Ց. Մարտ 13)

(փոխարէն 1903 ՅՈՒՆԻՍ 1ր)

ԳԱՅԾԱՆՆԵՐ

Իմրագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կանխաճարման կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Չարտար չէ վերագործունէլ չհրատարակուած ձեռագիրները: Մտնուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Մտնուցման 1 միջակերը 1 սանդիմկարծէ 1 գլխագիրը 2 սանդիմ: Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction: Rue Beaumont, 9.

ԲՈՎ Ա Ն Դ Ա ԿՈՒ Թ Ի Ի Ն

Մարդ մը կուգորի. — Հայեր ի Ռուսիա. — Հայեր յեգիպտոս. — Հայեր յԱւստրիա. — Հայեր ի Ռումանիա. — Ատրպատականի առաջնորդութիւնը. — Նամակ Հնդկաստանէն (Սինգապուր). — Բաճախի կեանքից. — Ռուսեանաբոճական պատերազմը. — Մանուցումներ:

ՄԱՐԿԻ ՄԸ ԿՈՒՉՈՒԻ

Բ

«Բայց ի՞նչ տեսակ մարդ» կը հարցնէ ու կը պատասխանէ ինքնիրենը, Ամերիկա հրատարակուող յեղափոխական թերթ մը:

Տարակոյս չիկայ թէ ուզուածը յեղափոխական մարդ մըն է. այդ մասին համաձայն ենք իրեն հետ: «Բայց ոչ յեղափոխութեան դպիր» կաւելցնէ մեր պայտծակիցը ու պէտք կըզգանք քիչ մը վերլուծել, քրքրելու այդ բանին տակ ծածկուած իմաստը:

Չենք ուզիր դպիր՝ եթէ ատով կիմանաք հաւախօսին արթնցած առաջին պոռոտագոյ ճառարսօսն ու զըչապ կը, որոնցմէ, աւա՛ղ, կարևոր հաւաքածոյ մը ունիք հող, ձեր շուրջը: Դպիր՝ որ յաճախ, փոխանակ ձայնը ի սպաս դնելու տաճարական պաշտերգութեան՝ անուանարկուծի, անձնական հաշիւներու շահագործութեան ու եղբայրագաւ ատելութիւններու սերմանումին զայն կը գործածէ: Այս դպիրներէն շատ կան ինչպէս ձեր դիմացը, նոյնպէս ձեր մէջը ու Աստուած լընէ որ անոնց թիւը աւելցնել եղած ըլլայ միտքերնիս: Բայց սպասելով որ անոնք, բայց զիտնալով որ անոնք պիտի լռեն օր մը՝ չենք հաւատար որ յեղափոխական զինուորը, իր ամբողջ արութեամբն ու անձնուիրութեամբը, բաւական է կռիւին մէջ յաղթանակը վճելու: Չօրավարի մը, ընդհանուր հրամանատարի մը — և ոչ թէ ենթասպաներու — անհրաժեշտ պէտքը կայ ու որչափ ատեն որ անիկա պակսի՝ կը վախճանք թէ ձեր ամբողջ գործունէութիւնները ամուլթեան պիտի դատապարտուին:

Կուռքերէ ձեռք կը քայէք. կըսէք թէ «մէկէ աւելին ստիպուցեալ վար առնել ու ձեր օտքերուն տակ կոխկոտել»: Ատիկա աղէ՛կ. բայց հարցուցի՛ք դուք ձեզի թէ ի՞նչ գաղտնի

պահանջի մը գոհացում տալու համար զանոնք ստեղծեր էր ժողովուրդը և անգամ մը որ զանոնք քանդեցիք՝ խորհեցա՞ք թէ անոնց մերկ պատուանդաններուն առջև այլի աչքեր անոնց յաղորդները պիտի փնտռէին ու չգտնելով՝ բնականօրէն, իրենց հոգիները պիտի մսէին քիչ մը:

Քա՛ւ լիցի որ նոր կուռքեր ստեղծել պահանջենք ձեզմէ: Հիններուն անժառանգ անհետացումը բաւական պերճախօս ապացոյց մ'է թէ արևուն լոյսին մէջ երևալ, քննուիլ, քաջընդիլ յանդգնող մէկը չունիք մէջերնիդ:

Դուք իսկ չէ՞ք յայտնեք ձեր երկիրը անոր շուտով «աժաննալուն», «անկարողութեան մատնուելուն»:

Ու ճիշդ չէ թէ յեղափոխական վարիչը «անհատական ինքնատուերածուծի իր ընդունակութեամբը» միայն փայլիլ (եթէ կրնանք այսպէս ըսել) գիտնալու է: Յեղափոխութիւնը որ միշտ, կազմակերպուած իշխանութեան մը ղէմ անգոյ, անկերպարան լաւագոյնի մը համար մղուած կռիւն է՝ պէտք է այդ լաւագոյնը ներկայացնող անոր գործադրութեան վստահութիւնը ներշնչող առաջնորդներ ունենայ իրեն ի գլուխ: Ամենէն հրաշարին պատրաստ, թափուած ծրագիրներուն՝ երբէք չպիտի ընէ այն ազդեցութիւնը զոր մարդ մը մինակը, իր խելքին, կորովին ու անարատ կեանքին ցուցադրութեամբը կը գործէ խանդավառ ամբողջութեամբ հոգիին վրայ: Քըննեցէ՛ք Պատմութիւնը և ամէն քայլի պիտի հանդպիք զայս հաստատող փաստերու:

Այդ մարդը սակայն, պէ՛տք է ըսել, յանպատրաստից, աներևոյթէն չիբար, չիծնիր: Իր ժամանակին արդիւնքն է, հազարաւոր հոգիներու անձայն կոչին պատասխանը, քնացող քաջութեանց ինքնաճանաչումը, մութ կամեութիւններու վրայ ծագած լոյսը: Հայն պողոտան է որուն կը յանգին ամէն անհատականութիւնները ու հոն իրար գտնելով, իրարու խառնուելով՝ զայն նոյն չափով կը մեծցնեն, կընդարձակեն: Ան՝ «նախախնամական մարդը»՝ ամբողջի մը ու կացութեան մը ճակատումէն ծնած կայծն է ուրկէ կը վառի լուսաւոր սիւնը որ բեր ու բեր հոգիներու խորէն ցոլարձակուած՝ ալ կառաջնորդէ անոնց մինչև Աւետեաց երկրին սեմը: Իր մահուը

նէն ետքը իսկ յաճախ ան կը շարունակէ գեռ ապրիլ. ցեղին հոգին որ իր լաւագոյն կարողութիւնները անոր մէջ անգրագարձած գտաւ՝ զայն կը պահէ դարէ ի դար, անոր հովանիին ներքեւ՝ դեռ կը քայլէ, իր նոր ճգնաժամներուն մէջ անոր անունովը գեռ կը գօտեպնդուի: Այս զգացումը եղած է անչուտ հնութեան մէջ ժառանգական միապետութիւնները հաստատողը ու ա՛ն է որ դեռ այսօր բազմաթիւ իշխանութիւններու հիմը իրենց գտնուած երկիրներուն հողին հետ կը ձուլէ:

Հայութեան այդ մարդը, որուն հիմա աւելի քան երբէք ա՛ն պէտք ունի, կը պակսի իրեն: Բայց կըզգամ որ ա՛լ երկար ատեն չպիտի պակսի: Կուսակցութեան մը անչուք մէկ անգամն է թերևս կամ մեկուսի չէզոք մը, ձեր այնչափ քաջկուտած, անարգած չէզոքներէն մէկը որ այն օրը սակայն երբ իր լիակատար ուժին զիտակցութիւնը ունենայ ու երևայ հանութեան աչքին՝ ձեր գուռները, ուզէք չուզէք, կանակի վրայ պիտի բացուին իրեն առջև, դուք ամէնքդ պիտի խոնարհիք իր նայուածքին տակ, ու վերցնելով մականը որուն ծանրութիւնը ձեզ սարսափեցուց՝ պիտի վազցնէ հաւատաւոր գունդերը Յաղթանակին:

Յովհաննէս-Կարապետ

ՀԱՅԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Գանձակի նահանգային դատարանը փետր. 7/20ին դանձակ քննեց Հայոց եկեղեցիի երէցփոխի և գանձակեցի մի Հայի գործը, որոնք ամբաստանուած էին թէ սպանութեան փորձը ըրած են: Դատարանը դանբաց յայտարարեց որ երկուքն ալ անպարտարձակուած են:

«Թիֆլիսքի լիսթօք» ուսուրագիրը հրատարակած է որ Ժամհարեանցի սպանութեան համար մեղադրուածներէն մէկը, վարդանեանց, Շուշի բանտէն Գանձակի բանտը փոխադրուած միջոցին, երբ Եւլախի կայարանը հասեր է, այնտեղ խանութէ մը գնումներ անելու համար դուրս ելեր և ճանապարհին, յարմար ըրպէ մը գտնելով, իրեն հակելու համար ուղէկցող լիթով զինուորը սպաններ ու ինք փախեր անյայտացեր է:

— Ալեքսանդրաբոլի փոխառու, նորը Սահակ վարդապետը և Ս. Աստուածածին եկեղեցիի աւագերէց Տ. Մարտիրոս քահանայն կովկասի կառավարչապետին հրամանով տեղափոխուած են Ալեքսանդրապոլէն:

— Էլմիածնէն կը գրեն թէ Արթ. Սահակ վ. Ամատունին կազմեր է մի հետաքրքիր բառարան, Երկար տարիներէ ի վեր հաւաքեր է հայերէն այն բոլոր բառեր որոնք չեն մասձ Հայկազեան և Առձեռն բառարաններին մէջ: Իր աղբիւրներ եղեր են ժողովրդական կենդանի լեզուն, գաւառաբարբառները, ձեռագիրները և լոյս տեսած հայերէն գիրքերը: Հաւաքած բառերը զուտ հայերէն բառեր են կամ հայացած բառեր և ոչ օտար: Բառարանին վերջը կցուած է և աշխարհաբար ոճերի բաւական հարուստ հաւաքածոյ մը: Բոլոր բառերն ունին և արդարացուցիչ վկայութիւններ ուրոնք ցոյց կուտան թէ ո՛ր տեղէն քաղուած են և թէ ի՞նչ է իրենց իմաստը:

ՀԱՅԵՐ ՅԵՐԿԻՊՏՈՍ

Վսեմ. Պողոս փաշա Նուպար, որի ազգասիրական առատաձեռնութիւններն արդէն ծանօթ են Արմէնիայի ընթերցողներին, ամսական 10 եգիպտական ոսկիի նուիրատուութիւն մ'ալ յատկացուցեր է Գահիրէի Հայերի Աղքատախնամ ընկերութեան:

— Վեհ. Շահն ինչպէս վսեմ. Բարթող փաշան, նոյնպէս և վսեմ. Տիկին Բարթող փաշան շնորհներ է այս օրեր Արիւծի և Արեգակի Ա կարգի պատուանշանը:

Ջերմ խնդակցութիւններ Հայ Տիկնոյ պարծանք բերող այդ բարձր յարգանքի նշանին համար:

— Վսեմ. Պողոս փաշա Նուպար՝ կէզիրէի (Եգիպտոս) երկրագործական ցուցահանդէսին մէջ ցուցադրուած բազմակներին համար առաջին մրցանակ ստանալով անմրցելի (hors concours) նշանակուեր է:

— Վսեմ. Աբրահամ Բարթող փաշա հովանաւորութեան տակ և ի նըպատս Ալեքսանդրիաի Աղքատախնամին՝ Չէնթինեա թատրոնին մէջ տրուած թատերական ներկայացումէն զուտ հասոյթ գոյացած է 300 անգլ. ոսկի:





